



ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ԹՕՐՈՆԹՈՅԻ
«ԿՐՕՆԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ»
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՏԻԿԻՆ ԶՈՒԱՐԹ ՊՈՅԱԾԵԱՆԻ ՀԵՏ

ՀԱՐՅ.—Ծանօթացուցէք, խնդրեմ ձեր կազմակերպութիւնը:

ՊԱՏ.—Գանատայի Թօրոնթո քաղաքի «Ա. Էջմիածնի Կրօնասէր Մայրեր»-ու Համախմբումը կը գործէ Գանատայի Առաջնորդարանի հովանիին տակ, գլխաւորութեամբ Առաջնորդ Տ. Յովնան Սրբ. եպիսկոպոս Տէրտէրեանի, Ա. Երրորդութիւն Հայաստանեայց Եկեղեցոյ կամարներուն տակ:

ՀԱՐՅ.—Ե՞րբ ծնունդ առաւ Զեր կազմակերպութիւնը և ի՞նչպէս:

ՊԱՏ.—Մեր կազմակերպութիւնը ծնունդ առաւ, մեր երիտասարդ և նուիրեալ Առաջնորդին հետեւողական ջանքերով, տակաւին վարդապետ և հոգևոր հովիւ Թօրոնթո քաղաքին. երբ վերակառուցուելու վրայ էր Ա. Երրորդութիւն Հայաստանեայց եկեղեցին նոր և հոյակապ շէնքով մը, անոր բարեգարդման ու պայծառացման համար, իմ գլխաւորութեամբ ի մի հաւաքեց խումբ մը տարեց և միջահասակ տիկիներ, և մենք մինչև եկեղեցոյ շինութեան աւարտումը, լրիւ պատրաստած էինք հետեւեալները.—զգեստաւորում պատարագիչի-սարկաւագներու-դպիրներու, ուրարներ. Ա. Սկիհի ծածկոցներ, Խաչի և Աւետարանի բռնիչներ և այլ ամէն տեսակի նրբահիւս և ճաշակաւոր ձեռագործներ, զորս կը գործածենք եկեղեցոյ մէջ: Եկեղեցոյ օծումին ժամանակ Վեհափառ Հայրապետը նշեց ու գնահատեց մեր համեստ աշխատանքը: Արդեն հինգ տարի է որ կը շարունակենք մեր գործունէութիւնը նաև այլ եկեղեցիներու համար:

ՀԱՐՅ.—Տիկ. Պոյանեան դուք ո՞րքան ժամանակէ ի վեր կը ծառայէք այս գաղափարին:

ՊԱՏ.—Ես մանկութենէս՝ Ազգասէր և Եկեղեցասէր ծնողքի մը շունչով ու հոգիով սնուած զաւակ, միշտ ծառայելու ոգիով ընտրած եմ այս ուղին և հաւատքով շարունակած մինչև 1959 թուականը. երբ Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի մէջ՝ խումբ մը եկեղեցասէր ու բարեպաշտ տիկիներ, Ա. Էջմիածնի տեսիլքով և անոր Աստուածառաք Գահակալին Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեամբ՝ հիմը դրինք «Կրօնասէր Տիկնանց Համախմբում»ին, նպատակ ունենալով—Բարեգարդում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Համախմբումը կը պահէ իր գործունէութիւնը 30 տարիներէ ի վեր: Մեր 20-ամեակին առթիւ վեց հիմնադիր Տիկիներս ստացանք Վեհափառ Հայրապետի գնահատանքը, սրբատառ կոնդակներով և «Ա. Ներսէս Շնորհալի» շքանշաններով:

ՀԱՐՑ.—Ե՞րբ փոխադրուեցաք Գանատա.

ՊԱՏ.—Լիբանանի աղէտալի պատերազմական շրջանին՝ ու անոր օրէ օր քայքայումներուն ի տես, ցաւ ի սիրտ 1982ին ընտանեօք փոխադրուեցանք Թօրոնթո, հոն ես տեղւոյն պայմաններուն համաձայն կը շարունակիմ «Կրօնասէր»ի հաւատաւոր գործունէութիւնս:

ՀԱՐՑ.—Ի՞նչպէս և ե՞րբ Ձեր հայեացքը կեդրոնացուցիք հայրենիքի նորաբաց եկեղեցիներու բարեգարդման աշխատանքին:

ՊԱՏ.—Երբ մեր սրբազան հայրենիքը ունեցաւ «Խղճի և հաւատքի» ազատութիւն ու բացուեցան ամէն շրջանէն ներս գործող եկեղեցիներ, որոնք խիստ կարիքը ունէին բարեգարդման, մեր Առաջնորդ սրբազանը՝ Յովնան եպս. փափաք յայտնեց Վեհափառ Հօր ցանկութեամբ, աշխատանքի ձեր ընդլայնել և մեր կարողութեան սահմանին մէջ՝ շարունակել առաւել թափով: Արդէն երեք տարիէ ի վեր իմ գլխատրութեամբ ունինք 20էն աւելի հաւատացեալ ու անձուէր մայրեր, մեծ մայրեր, որոնք շաբաթը երկու օր առաւօտէն մինչև երեկոյ սիրով կ'աշխատին: Մեր Հոգեւոր հովիւ Տ. Արարատ վրդ. Գալթազճեան, բարեշնորհ Տիգրան սարկաւագ Ճովֆայեան և քարտուղարուհի Ազնիւ տիկ. Նորա Պալթայեան իրենց ինքնաշարժներով անձնուիրաբար մեզ կը հաւաքեն մեր տուներէն առաւօտները և երեկոները տուն կը հասցնեն:

ՀԱՐՑ.—Իսկ ի՞նչեր են Ձեր պատրաստած առաքումները, կը հաճի՞ք մի քիչ մանրամասն բացատրել:

ՊԱՏ.— Նախ պէտք է ըսել որ այս աշխատանքները իրագործելու համար հարկ եղած գումարն է կարելորդ, ինչ որ մեր սրբազան հայրը բաւականին մեծ գումարով ֆօնտ մը յատկացուցած է այս նպատակին համար: Կունենանք նաև ազնիւ նուիրատուներ: Երեք տարիէ ի վեր, Յովնան սրբազան մաս առ մաս բաժնած է զանոնք: Մենք կը պատրաստենք.—պատարագիչի զգեստ լրիւ կազմով ու ճերմակ շապիկներով: Սարկաւագներու մասնաւոր շապիկներ իրենց ուրարներով: Դպիրներու շապիկներ, աղջկանց գլխու լաչակներ, Ս. Սկիհի ծածկոցներ, Խաչի և Աւետարանի թաշկինակներ, գրակալներու շապիկ և ծածկոցներ, մասի համար ծրարներ, հաղորդութեան համար մասնաւոր բռնիչ միծկակ թաշկինակներ, և խորանի վարագոյններ:

ՀԱՐՑ.—Ի՞նչ է ձեր ապագայ ծրագիրը:

ՊԱՏ.—Ես և իմ աշխատակից նուիրեալ քոյրերս, սրտի մեծ գոհունակութեամբ բաւարարուած ենք այս օգտաշատ աշխատանքով և անոր արդիւնքով:

Գործը և պարտականութիւնը մերն է: Մենք կը խոստանանք նոյն հաւատքով ու տեսիլքով և առաւել բծախնդրութեամբ շարունակել մեր աշխատանքը, այնքան ատեն որ Տէրը տա՛յ առողջութիւն և կեանք մեզի: